

ԸԸԸԸ



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջանա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«04» 02 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 015 - 25

Նախաձեռնող՝

«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ
Երևան, Ահարոնյան փ., շ. 8, բն. 45

Գործունեությունը՝

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների
հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասում
արդյունահանում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 015 - 25

«04» փետրվարի 2025 թ.

«Էյ Էմ Թի» ՍՊԸ-ի կողմից Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի արդյունահանման աշխատանքների (ժամկետի երկարաձգման) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Արամուս բնակավայր

Ներածական մաս. «Էյ Էմ Թի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի (այսուհետ՝ Տեղամաս) արդյունահանման աշխատանքների իրականացման ժամկետը երկարաձգել: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Հանքավայրի տարածքը զբաղեցնում է 3,47 հա մակերես: Ըստ հաշվետվությունում նշված տեղեկատվության՝ հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է:

Նկարագրական մաս. Արամուսի բազալտների հանքավայրի Տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Արովյան համայնքի Արամուս բնակավայրից 1,1 կմ հարավ-արևելք: Տեղամասը հողաձածկ և ասֆալտապատ ճանապարհներով կապված է Զովք (2,6 կմ), Զորադրյուր (4,5 կմ), Գետաշեն (5,5 կմ) և Կամարիս (1,5 կմ) բնակավայրերի, Արովյան (6,0 կմ) և Երևան (27 կմ) քաղաքների հետ: Տեղամասի օգտակար հաստվածքը ծագումնաբանորեն հարում է Կոտայքի սարավանդի վերին պլիոցենի լավային ծածկոցին և տեղակայված է վերջինիս արևելյան հատվածում: Այն բնութագրվում է հարթ մեղմ գոգավոր սարավանդային ռելիեֆով և զուրկ է անտառային ծածկոցից: Ժամանակակից առաջացումներն առաջացնում են համատարած ծածկոց և ներկայացված են հետևյալի



նստվածքներով: Մակաբացման ապարները ներկայացված են 2,2-ից 3,6 մ (միջինը՝ 3,0 մ) հզորությամբ բազալտների տարաչափ բեկորներ պարունակող դեյուվիալ առաջացումներով:

Երկրաբանական ուսումնասիրությունների տվյալների համաձայն՝ նախատեսվող գործունեության տարածքում հողաբուսական շերտը (հողի բերրի շերտ) բացակայում է: Հետախուզափորվածքների անցման ընթացքում իրականացված հիդրոերկրաբանական դիտարկումների արդյունքում պարզվել է, որ Տեղամասում, ինչպես նաև հարակից՝ Արամուսի հանքավայրի այլ տեղամասերում կատարված այլ դիտարկումների համաձայն՝ ստորերկրյա ջրերի հորիզոնները բացակայում են: Հորատանցքերում, հետախուզահորերում և բացահանքում ստորերկրյա ջրերի բացակայությունը պայմանավորված է բազալտների ճեղքավորվածությամբ և ջրաթափանցելիությամբ:

Հանքավայրի տարածքում նախնական դիտարկումների արդյունքներով չեն արձանագրվել կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր: Համատարած բուսական ծածկույթը բացակայում է:

Տեղամասը տեղակայված չէ բնության հատուկ պահպանվող տարածքում և չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության հուշարձանների կամ դրանց սահմանների հետ:

Հանքավայրի Տեղամասում «ԷՅ ԷՄ ԹԻ» ՍՊԸ-ն իրականացրել է երկրաբանահետախուզական աշխատանքներ: Տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Ընդերքի գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 8 եզրակացությամբ՝ 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ A կարգով և 155400 մ³ քանակով:

Հանքավայրի բազալտներից ստացված խիճը բնութագրվում է համեմատաբար կայուն ֆիզիկամեխանիկական ցուցանիշներով ու համապատասխանում է «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ՄԾԻ-ի պահանջներին և կարող է օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոնների արտադրության համար, ճանապարհաշինարարության մեջ և այլ տեսակի շինարարական աշխատանքներում:

2021 թվականին ընկերությունը ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ 0017-21 դրական եզրակացությունը, օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/637 թույլտվությունը, Պ-637 ընդերքօգտագործման պայմանագիրը և Լ-637 լեռնահատկացման ակտը՝ 4 տարի 11 ամիս գործողության ժամկետով:

Ըստ «Էյ Էմ Թի» ՍՊԸ-ին տրված թույլտվության, նախագծի և լեռնային աշխատանքների կատարման ժամանակացույցի՝ Տեղամասի մարվող պաշարների քանակը 155400 մ³ է, իսկ արդյունահանվողը՝ 147000 մ³, տարեկան մարվողը՝ 31714 մ³, արդյունահանվողը՝ 30000 մ³:

Ընկերության կողմից մարվել է տրամադրված պաշարների 82800 մ³ ծավալը: Մնացորդային պաշարները 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են 72600 մ³:



Ընկերությունը չի կարող արդյունահանել ամբողջ մնացորդային պաշարները նշված ժամանակահատվածում, տրամադրված թույլտվությամբ, նախագծով և լեռնային աշխատանքների կատարման ժամանակացույցով և նախատեսում է թույլտվության ժամկետը երկարաձգել 5,3 տարով, մնացորդային պաշարներն արդյունահանել տարեկան 13800 մ³ ծավալով: «Էյ Էմ Թի» ՍՊԸ-ն կազմել է հանքավայրի Տեղամասի արդյունահանման նախագիծը և ՇՄԱԳ հաշվետվությունը:

Բացահանքի կորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են ստորև՝

- | | | | |
|----------------|-------------|----------------|-------------|
| 1. X=4455037.8 | Y=8472420.4 | 5. X=4454694.0 | Y=8472542.0 |
| 2. X=4455046.0 | Y=8472528.3 | 6. X=4454732.8 | Y=8472489.8 |
| 3. X=4454910.7 | Y=8472568.8 | 7. X=4454890.7 | Y=8472454.3 |
| 4. X=4454782.0 | Y=8472580.0 | | |

Տեղամասը տեղակայված է 1501-1580 մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կորդինատներն են՝ 40°13' 33" - հյուսիսային լայնության, 44°41' 17" - արևելյան երկայնության:

Բացահանքի պարամետրերն են՝

- ամենամեծ երկարությունը – 356 մ,
- ամենամեծ լայնությունը – 116 մ
- ամենամեծ խորությունը՝ 9,4 մ
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 3,0 մ
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը՝ 5,8 մ
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 72600 մ³
- տարեկան մարվող պաշարները կազմում են 13800 մ³
- արդյունահանվող պաշարների քանակը՝ 68400 մ³
- մակաբացման ապարների քանակը – 47400 մ³

Հանքավայրի բացումը կատարվել է նրա հյուսիսային՝ 1578,8 մ բարձրությամբ հորիզոնից: Հաջորդ՝ 1576,3 մ և 1573,8 մ բարձրությամբ հորիզոնները կմշակվեն կտրող խրամների միջոցով, առավելագույն թեքությունն ընդունվել է 102,2 %: Հանքաստիճանների բարձրությունն ընդունված է 2,5 մ: Հանքավայրի հարավային, հարավ-արևելյան կողմից կառուցվել է 383 մ երկարությամբ ավտոճանապարհ, որը կարգաբերվելու է՝ աշխատանքները շարունակելու համար:

Բացահանքը մշակվում է ընդլայնական ընթացքաշերտերով, միակողմանի մշակման համակարգով: Աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 2,0-3,2 մ, հանքաստիճանի թեքության անկյունը՝ 900, հանքակողերի թեքության անկյունը՝ 750, անվտանգության առափի լայնությունը՝ 1,5 մ, աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30 մ:

Օգտակար հանածոն ներկայացված է 3,8-5,8 մ (միջինը 4,47 մ) հզորությամբ մերձհորիզոնական տեղադրմամբ խիստ ճեղքավորված, ջարդոտված, բազալտ հաստվածքով:

Բացահանքի աշխատանքային նախագծով նախատեսվում է Տեղամասի մնացորդային պաշարները՝ 72600 մ³ շահագործել բաց եղանակով՝ առանց հորատաշարաների:



բացահանքի տարեկան արտադրողականությունը ընդունել 13800 մ³ մարվող պաշար, աշխատանքները կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հանքավայրի մշակման ընթացքում առաջացող կորուստները կազմելու են 4200 մ³ (5,8%): Բացահանքի աշխատանքային ռեժիմը 260 օր է՝ օրական 8 ժամ, մեկ հերթով:

Արդյունահանված բազալտի զանգվածը տեղափոխվելու է բացահանքից 0,5 կմ հեռավորության վրա գտնվող «Թադևոսյան» ՍՊԸ-ին պատկանող ջարդիչ-տեսակավորող կայանք, իսկ մակաբացման ապարները ժամանակավոր պահեստավորվելու են բացահանքի հարևանությամբ՝ հյուսիսային մասում, այնուհետև տեղափոխվելու են բացահանքի տարածք՝ ստեղծելով ներքին լցակույտառաջացում:

Օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում մակաբացման ապարների 56900 մ³-ն արդեն տեղափոխվել է արտաքին լցակույտ: Բացահանքում արդյունահանման ենթակա տարածքի վրա մնացել է դեռևս 47400մ³ ծավալ, որը նախագծով նախատեսվում է տեղափոխել արտաքին լցակույտ շահագործման 1-2-րդ տարիներին: Շահագործման վերջին տարվանից սկսած դրանք աստիճանաբար տեղափոխվելու են դեպի բացահանքի արդյունահանված տարածքները և տեղադրվելու են մինչև հատակը բացված՝ արդյունահանված հորիզոնի վրա:

Արդյունահանման ընթացքում լինելու է արտաքին և ներքին լցակույտառաջացում: Լցակույտը բացահանքի հյուսիսային մասում է, անմիջապես նրա հարևանությամբ, տեղադրված է ռեյիեֆի թեքության վրա, նրա կողերի թեքման անկյունը կազմում է՝ 35°: Հանքավայրի շահագործման վերջին տարվա ընթացքում N 1 լցակույտի մակաբացման ապարներից՝ 47400 մ³, ինչպես նաև նախկինում ստեղծված լցակույտի 56900 մ³ ծավալներից 101000 մ³-ը աստիճանաբար տեղափոխվելու է արդյունահանված տարածքի վրա, փովելու է 3,2 մ բարձրությամբ և հարթեցվելու է՝ ստեղծելով ներքին լցակույտառաջացում:

Հանքավայրի շահագործման ավարտից հետո մնացած մակաբացման ապարները ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ տեղափոխվելու են բացահանքի 1573,8 – 1576,3 մ բարձրությամբ հատակը, փովելու են 3,2 մ բարձրությամբ և հարթեցվելու են:

Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Կենսաբանական ռեկուլտիվացիան նախատեսվում է լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո, հիդրոցանքի եղանակով՝ նպատակ ունենալով ստեղծել բուսական շերտ և խուսափել հողի էրոզիայից:

Աշխատանքներն իրականացնելիս բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, որը տարածք է բերվելու պայմանագրային հիմունքներով՝ տեխնիկական ջուրը՝ ջրցան-վացող մեքենայով, իսկ խմելունը՝ ավտոցիստեռնով: Տարածքում առաջացող կենցաղային կեղտաջրերը լցվելու են բետոնապատ սեպտիկ հոր, որտեղից պարբերաբար իրականացվելու է դրանց տեղափոխումը սահմանված կարգով՝ հատուկ ծառայությունների միջոցով:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր համայնքում (Արամուս բնակավայր) ստեղծվել են հանրային լուսամեր: Համայնքը տվել է նախնական համաձայնություն **ստեղծվող գործունեության իրականացմանը:**



Բացահանքում աշխատելու համար ներգրավվելու են համայնքի բնակիչները, բացվելու են աշխատատեղեր: Ընկերությունը նախատեսում է յուրաքանչյուր տարի Կոտայքի մարզի Արամուս համայնքի բյուջե վճարել որոշակի գումար և իր պատրաստակամությունն է հայտնել պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարության հետ, քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե, ինչպես նաև համայնքում իրականացվող աշխատանքներին օժանդակելու նպատակով տրամադրել տեխնիկական միջոցներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ.

➤ փոշեգոյացումը բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով ճանապարհների, լցակայանների, ապարների, աշխատանքային հրապարակների և այլնի ինտենսիվ ջրցան տարվա դրական ջերմաստիճանի դեպքում,

➤ կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարաների մեջ և տեղափոխում մոտակա աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,

➤ շահագործվող տեխնիկայից արտանետումները նվազեցնելու նպատակով ֆիլտրերի տեղադրում,

➤ ջրային ռեսուրսների պահպանության նպատակով մակերևութային հոսքաջրերի բացառում, կեղտաջրերի հավաքում,

➤ շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և ձայնախլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

➤ հողային ռեսուրսների պահպանության նպատակով տեխնիկական միջոցների սպասարկումն իրականացվելու է Տեղամասի սահմաններից դուրս՝ սպասարկման մասնագիտացված կետերում,

➤ խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ աշխատանքների ավարտից հետո,

➤ աշխատանքների իրականացման ընթացքում նախաձեռնվելու են միջոցառումներ՝ ուղղված բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների պահպանությանը:

Տեղամասի շահագործման ընթացքում «Էյ Էմ Թի» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի երկօքսիդ, մուր, ծծմբային անհիդրիդ, փոշի) պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում,

2. աղմուկի և թրթռումների մակարդակի պարբերական չափումներ,

3. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես՝ չեզոքացուցիչ սարքավորումների վիճակի պարբերական մշտադիտարկումներ,

4. հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ նվազագույնը տարին մեկ անգամ,



5. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ նվազագույնը տարին մեկ անգամ, հետագա պարբերականությունը կսահմանվի հիմնվելով հայցվող տարածքում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների հայտնաբերումից:

Հանքի փակման աշխատանքների ընթացքում և փակումից հետո ևս նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ՝ 5 տարի ժամկետով: Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ենթակա է վերանայման՝ հանքի փակման վերջնական ծրագրին համապատասխան:

Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության ընթացքում անհրաժեշտ է՝

1. առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ փոշու և վնասակար արտանետումների տարածումը կանխարգելելու նպատակով, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման դեպքում ապահովել լրացուցիչ կանխարգելիչ միջոցառումների իրականացում,

2. արդյունահանման աշխատանքների իրականացումը շարունակել հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո՝ առաջնորդվելով «Հողային օրենսգրքի» պահանջով՝ հողամասերն օգտագործել դրանց նպատակային նշանակությանը համապատասխան,

3. բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով,

4. իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան,

5. թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան,

6. արդյունահանման աշխատանքներն իրականացնել առանց մայրեցման



7. աշխատանքների ավարտից հետո իրականացնել լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

8. ապահովել հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էյ Էմ Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Էյ Էմ Թի» տեղամասի արդյունահանման ժամկետի երկարաձգման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան